ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/12

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ժ. Ղալթախչյանի

Մասնակցությամբ՝
Պատվիրատուի ներկայացուցիչ՝ Գագիկ Ջանջուղազյան
«Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Գագիկ Ալեքսանյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 17.04.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին չեղյալ համարելու 05/04/2019 թվականի որոշումը և օրինական աժ տալ նույն հանձնաժողովի 28/03/2019 թվականի որոշմանը, որով «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊ ընկերություն 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել:

Բողոքներ քննող անձի 17.04.2019թ. որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 23.04.2019թ. նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 29.04.2019թ. և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 08.05.2019թ.:

2. <u>«Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 28/03/2019 թվականի որոշմամբ «ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և հայտը միաձայն մերժվել է:

Մերժման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ կազմակերպության կողմից նախկինում կատարված թիվ ՀՀ ԳՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ17/1 պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունը չի գնահատվել որպես նմանատիպ:

29/03/2019 թվականին ՍԱԾ ՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի քարտուղարը զեկուցագիր է ներկայացրել Սոցիալական ապահովության ծառայության գլխավոր քարտուղարին և խնդրել է հանձնարարական տալ իրավական ապահովման վարչությանը վերը նշված հիմքով «ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊ ընկերության հայտը մերժելու և «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով հրավերով սահմանված պահանջներին և ՀՀ կառավարության 04/05/2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների ընթացակարգի կազմակերպման» կարգի 65-րդ կետով համանման (նմանատիպ) գործարքների համար սահմանվաած պահանջներին չբավարարելու վերաբերյալ:

Ի պատասխան զեկուցագրի Սոցիալական ապահովության ծառայության իրավական ապահովման և դատական գործերի վարչության պետը գրություն է հասցեագրել Սոցիալական ապահովության ծառայության գլխավոր քարտուղարին և առաջարկել է հանձնարարել ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին վերանայել հանձնաժողովի որոշումները:

ՀՀ կառավարության 04/05/2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների ընթացակարգի կազմակերպան» կարգի 65-րդ կետով սահմանվաած է հետևյալը.

«65. Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց

երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:»

Նշված կետի վերջին նախադասությամբ հստակ սահմանվում է, որ համանման համարվող գործունեության տեսակները տարաբնույթ մեկնաբանվել կարող են միայն այն դեպքում, երբ հրավերով սահմանված համանման գործունեության տեսակները այդպիսի մեկնաբանության հնարավորություն տալիս են:

Անդրադառնանք հրավերին. ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնանշման հարցման հրավերի 2.5 րդ կետի 1) մասի ա. ենթակետի երկրորդ պարբերությունը սահմանում է հետևյալը.

«Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում ավտոմատացված որոշումներ կայացնող համակարգի մշակման/ներդրման և(կամ) սպասարկման ծառայությունների մատուցած լինելը»:

Ընդ որում հարկ է նշել, որ մեջբերված «ավտոմատացված որոշումներ կայացնող» հատվածը ոչ թե մեր կողմից է ընդգծված առավել ուշադրություն հրավիրելու համար, այլ ընդգծված է հենց հրավերի տեքստում: Այսինքն, հրավերով սահմանվել է համանմանությունը որոշելու հստակ ու սպառիչ չափանիշ:

«ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊ ընկերության կողմից հանձնաժողովին ներկայացվել են ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/7 և ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/8, 06/12 և 08/12/2017 թվականի պետական գնման պայմանագրերը, որոնցով մատուցման ենթակա ծառայությունների տեխնիկական բնութագրերը հստակորեն սահմանված են պայմանագրերի թիվ 1 հավելվածներով: Հավելվածներով որևէ խոսք չկա ավտոմատացված որոշումներ կայացնող համակարգի մշակման/ներդրման և(կամ) սպասարկման ծառայությունների մասին, հետևաբար ընկերության կողմից ներկայացված պայմանագրերով որևէ կերպ չի հիմնավորվում համանման/նմանատիպ ծառայությունների մատուցված լինելու փորձը:

Ավելին, ՍԱԾ ՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովն իր 28/03/2019 թվականի նիստի թիվ 4 արձանագրության առաջին բաժնի 2-րդ կետի ա), բ) և գ) մասերով արդարացիորեն արձանագրել է, որ «ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված ծառայությունը նմանատիպ չէ, քանի որ.

ա) հանդիսանում է տարաբնույթ տեղեկատվության մուտքագրման, հաշվառման ռեեստր, տեղեկատվության փոխանակման համակարգ և առցանց գրանցման պորտալ, համապատասխան հաշվետվություններով և վերահսկողական գործառույթներով,

բ) մուտքագրված տվյալների հիման վրա չի ապահովում ավտոմատացված այնպիսի որոշումների կայացումը, որոնք քաղաքացու համար առաջացնում են իրավունքներ և պարտականություններ (Ծառայության գործառույթների շրջանակում քաղաքացիների կենսաթոշակի, նպաստի, պարգևավճարի, պատվովճարի և սոց. Ապահովության ծրագրերով նախատեսված այլ դրամական վճարների նշանակման և վճարման իրավունքի ձևակերպման, փոփոխման և դադարեցման հետ կապված գործառույթները իրականացվում են ավտոմատացված կերպով պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի առանձնացված ենթահամակարգերի միջոցով: Այսինքն, համակարգն ինքն է ապւսհովում որոշումների ինքնաշխատ կայացումը, այդ թվում նշված դրամական վճարների բոլոր տեսակների վճարման ապահովումը (վճարման ցուցակների ձեավորումը և վճարման գործընթացի հետ կապված այլ գործառույթներ):

գ) որպես կարևոր բաղադրիչ չունի միանվագ և պարբերական վճարումների իրականացումն ապահովող գործառույթ:

Այսպիսով, Հրավերի 2.5-րդ կետի 1) մասի ա. Ենթակետով սահմանված է համանման տնտեսական գործունեության որոշման սպառիչ հիմք և կարգ, որը տեղ չի թողնում երկակի մեկնաբանությունների համար:

Հետևաբար, ՀՀ կառավարության 04/05/2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների ընթացակարգի կազմակերպման» կարգի 65-րդ կետով սահմանված տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը հօգուտ մասնակցի մեկնաբանելու կանոնը տվյալ դեպքում կիրառելի չէ:

Համոզիչ չեն նաև ՍԱԾ ՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի քարտուղարի 29/03/2019 թվականի զեկուցագրում և դրան ի պատասխան Սոցիալական ապահովության ծառայության իրավական ապահովման և դատական գործերի վարչության պետի պատասխան գրության մեջ տեղ գտած դատողությունները, քանի որ «ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված պայմանագրերով ներկայացվող ծառայությունների տեսակները հստակ թվարկված և որոշակի են դրանք չեն վկայում համանման ծառայությունների մատուցման փորձը, հակառակը հերքում են:

Ելնելով վերոգրյալից, գտնում ենք որ ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 05/04/2019 թվականի որոշումն անհիմն է:

Բացի այդ, գնահատող հանձնաժողովի կողմից որոշման ընդունումը չի կարող վերանայվել հանձնաժողովի քարտուղարի ունեցած/արտահայտած կարծիքի հիման վրա, ինչը սույն գործով տեղի է ունեցել: Քարտուղարի իրավասությունները սահմանված են օրենքով և նման իրավասություն նա չունի, հետևաբար քարտուղարի կողմից նախաձեռնված գործընթացը ապօրինի է: Ստորև ներկայացված է օրենքի համապատասխան կետը

Հոդված 26. Գնահատող հանձնաժողովը

2. Գնահատող հանձնաժողովն ունի քարտուղար, որը նշանակվում է հանձնաժողովի կազմավորման մասին ակտով: Քարտուղարը հանձնաժողովի անդամ չէ:

Քարտուղարը՝

1) կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքները.

2) ստանում և հաշվառում է հայտերը.

3) կազմում և հանձնաժողովին է ներկայացնում վերջինիս հաստատմանը ենթակա փաստաթղթերի նախագծերը.

4) տրամադրում է հրավեր.

5) համապատասխան փաստաթղթեր կազմելով՝ գրառում է հանձնաժողովի գործունեությանը վերաբերող տեղեկությունները և ապահովում հանձնաժողովի գործունեության ընթացքում այդ փաստաթղթերի անվնաս պահպանումը.

6) կազմակերպում է գնման ընթացակարգի վերաբերյալ պարզաբանումների տրամադրման աշխատանքները.

7) պատասխանատվություն է կրում հանձնաժողովի գործունեության՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխանության համար:

Նույն իրավախախտման շղթայի շարունակությունն է, նաև ՍԱ ծառայության գլխավոր քարտուղարի 03/04/2019 թվականի հրամանը վերանայելու ՍԱԾ ՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնանշմսև հարցման գնահատող հանձնաժողովի 28/03/2019 որոշումը:

Այն ապօրինի է. քանի որ օրենքով այսպիսի հանգամանքներում հանձնաժողովի որոշման վերանայման լիազորություն գլխավոր քարտուղարը չունի, հետևաբար ապօրինի հրամանի հիման վրա կատարված հետագա գործողությունները նույնպես օրինական չեն:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով խնդրել է.

Պարտավորեցնել ՍՍԾ ԳՀԾՁԲ-19/6 ծանծկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին չեղյալ համարել 05/04/2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ 28/03/2019 թվականի որոշմանը:

3. <u>Սոցիալական ապահովության ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Սոցիալական ապահովության ծառայությունը 2019 թվականի ապրիլի 16-ին «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ-ի կողմից 2019թ. ապրիլի 17-ին ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/12 բողոքի վերաբերյալ հայտնել են հետևյալը.

«2019 թվականի մարտի 7-ին Սոցիալական ապահովության ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից հայտարարվել է Ծառայության կարիքների համար ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգ՝ ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով:

Գնման ընթացակարգի շրջանակում հայտեր են ներկայացրել թվով երկու ընկերություն՝ այդ թվում «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ-ն, «ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊԸ-ն իսկ «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ի հայտի պիտանելիության, տեխնիկական և ֆինանսական չափորոշիչներից ոչ մի փաստաթուղթ ներբեռնված չէ համակարգում, գնային առաջարկի լրացման դաշտը լրացված չի եղել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Հրավերի 1-ին մասի 7.2 կետի համաձայն՝ «հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:

Հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև հինգ, իսկ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի գնահատումը՝ դրանք ներկայացվելու օրվանից հաշված մինչև տաս աշխատանքային օրվա ընթացքում:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան»: Գնահատող հանձնաժողովի 2019թ. մարտի 15-ի որոշմամբ 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊԸ-ն, որին հրավերով սահմանված պահանջներին համապատասխան առաջարկվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

«ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովին է ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, որոնց գնահատման արդյունքում

հանձնաժողովի կողմից արձանագրվել է հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես.

- մասնակցի կողմից ներկայացված որպես նախկինում կատարված նմանատիպ N ՀՀ ԳՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ17/1 պայմանագրի շրջանակներում ընկերությունը մատուցել է ՀՀ ԳՆ աշխատակազմի ՍԱՊԾ էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի գործարկման նպատակով անհրաժեշտ նոր մոդուլների ստեղծման և ուսուցման, նախկին մոդուլների լրամշակման և ուսուցման, ուսուցողական ձեռնարկների ստեղծման, անհրաժեշտ ծրագրավորման աշխատանքների կատարման և հետագա սպասարկման ծառայություններ:

«ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊԸ-ի կողմից N ՀՀ ԳՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ17/1 պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունը՝ արդյունքը չի գնահատվում որպես «նմանատիպ», քանի որ պայմանագրով ներկայացված համակարգը.

1. հանդիսանում է տարաբնույթ տեղեկատվության մուտքագրման, հաշվառման ռեեստր, տեղեկատվության փոխանակման համակարգ և առցանց գրանցման պորտալ, համապատասխան հաշվետվություններով և վերահսկողական գործառույթներով,

2. չի ապահովել ինքնաշխատ եղականով այնպիսի որոշումների կայացումը, որոնք քաղաքացու համար առաջացնում են իրավունքներ և պարտականություններ,

3. որպես կարևոր բաղադրիչ չունի միանվագ և պարբերական վճարումների իրականացումն ապահովող գործառույթ:

ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնանշման հրավերի գնման առարկան՝ «Էլ.կենսաթոշակ» համակարգը իր ենթահամակարգերով իրականացնում է ՀՀ քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և այլ անձանց իրավունքների ապահովումը «Կենսաթոշակների մասին», «Նպաստների մասին» ՀՀ օրենքների շրջանակում, որի վերջնական արդյունքը շահառուների հասանելիք գումարների վճարումն է, ինչն իրականացնելու համար համակարգը կայացնում է մի շարք ավտոմատացված որոշումներ.

1) մուտքագրված տարաբնույթ տեղեկատվության հիման վրա էլեկտրոնային գործի ձևավորման, համապատասխան վճարատեսակի (վճարատեսակների), չափի, վճարման ենթակա գումարի, ժամկետների ինքնաշխատ որոշում,

2) առկա տեղեկատվության հիման վրա կենսաթոշակ (նպաստ) վճարելու դադարեցման և կենսաթոշակ (նպաստ) ստանալու իրավունքի դադարեցման ինքնաշխատ որոշումներ,

3) համակարգում առկա տվյալների հիման վրա միանվագ և պարբերական վճարման ցուցակների ձևավորում,

4) վճարումների վերաբերյալ տեղեկատվության ամփոփումից հետո հաջորդ ամսվա վճարման ենթակա տվյալների ինքնաշխատ նախապատրաստում (այն է՝ նախորդ ամսում

չվճարված գումարների ձևավորում որպես անցողիկ գումար, ինչպես նաև 12-րդ ամիսը չվճարված գործերի վճարման դադարեցում):

Հիմք ընդունելով վերոգրյալը հանձնաժողովի որոշմամբ կասեցվել է նիստը մեկ աշխատանքային օրով և «ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊԸ-ին՝ առաջարկվել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

2019թ. մարտի 28-ի նիստին «ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊ ընկերությունը՝ նախկինում կատարված նմանատիպ պայմանագրում տեղ գտած հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխունությունը շտկելու վերաբերյալ ծանուցմանը ի պատասխան, հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովին է ներկայացրել գրություն, որով 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը ևս մեկ անգամ հավաստում է, որ արդեն ներկայացված նախկինում կատարված նմանատիպ N ՀՀ ԳՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ17/1 պայմանագրի շրջանակներում ընկերության կողմից մատուցված ծառայությունները համապատասխանում են հրավերով դրանց գնահատման համար սահմանված պահանջներին: Նույն նիստի ընթացքում հանձնաժողովի որոշմամբ.

1) «ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար:

2) մերժվել է «ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊ ընկերության հայտը հետևյալ հիմնավորմամբ՝ կազմակերպության կողմից հանձնաժողովին ներկայացրած՝ նախկինում կատարված նմանատիպ N ՀՀ ԳՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ17/1 պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայության (պայմանագրի) առարկան՝ սպասարկված համակարգը, չի գնահատվում որպես «նմանատիպ», քանի որ պայմանագրով ներկայացված համակարգը.

ա) հանդիսանում է տարաբնույթ տեղեկատվության մուտքագրման, հաշվառման ռեեստր, տեղեկատվության փոխանակման համակարգ և առցանց գրանցման պորտալ, համապատասխան հաշվետվություններով և վերահսկողական գործառույթներով,

բ) մուտքագրված տվյալների հիման վրա չի ապահովում ավտոմատացված այնպիսի որոշումների կայացումը, որոնք քաղաքացու համար առաջացնում են իրավունքներ և պարտականություններ (Ծառայության գործառույթների շրջանակում քաղաքացիների կենսաթոշակի, նպաստի, պարգևավճարի, պատվովճարի և սոց. ապահովության ծրագրերով նախատեսված այլ դրամական վճարների նշանակման և վճարման իրավունքի ձևակերպման, փոփոխման և դադարեցման հետ կապված գործառույթները իրականացվում են ավտոմատացված կերպով՝ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի առանձնացված ենթահամակարգերի միջոցով: Այսինքն, համակարգն ինք է ապահովում որոշումների ինքնաշխատ կայացումը, այդ թվում՝ նշված դրամական վճարների բոլոր տեսակների, վճարման ապահովումը (վճարման ցուցակների ձևավորումը և վճարման գործընթացի հետ կապված այլ գործառույթներ):

գ) որպես կարևոր բաղադրիչ չունի միանվագ և պարբերական վճարումների իրականացումն ապահովող գործառույթ:

Հիմք ընդունելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովի որոշմամբ ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով հրավերի 7.21 կետով սահմանված կարգով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊ ընկերությանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 27-րդ կետի պահանջների համաձայն, հանձնաժողովի քարտուղարի 2019թ. մարտի 29-ի զեկուցագրի հիման վրա կասեցվել է հանձնաժողովի գործունեությունը, Ծառայության իրավական ապահովման և դատական գործերի վարչության եզրակացություն ստանալու համար՝ «ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊ ընկերության հայտը գնահատող հանձնաժողովի կողմից վերը նշված հիմքով մերժելու և «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով հրավերով սահմանված պահանջներին և Կարգի 65-րդ կետով համանման (նմանատիպ) գործարքների համար սահմանված պահանջներին չբավարարելու հիմնավորմաբ:

Իրավական եզրակացությունն ստանալուց հետո Կարգի 27-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հանձնարարվել է գնահատող հանձնաժողովին, ըստ իրավական եզրակացության, վերանայել հանձնաժողովի որոշումները: 2019թ. ապրիլի 5-ի հանձնաժողովի որոշմամբ վերանայվել է «ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊ ընկերությանը մերժելու որոշումը և Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից և հրավերով սահմանված անգործության ժամկետից հետո պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվել:

Ինչ վերաբերվում է բողոք բերող անձի՝ «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից հանձնաժողովի քարտուղարի և ՍԱԾ գլխավոր քարտուղարի՝ ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում, իրենց իրավասության շրջանակում կայացրած որոշումների վերաբերյալ մեկնաբանությունների հայտնում եմ, որ. հանձնաժողովի քարտուղարը և ՍԱԾ գլխավոր քարտուղարը գործել են իրավաչափ, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի VI բաժնով (Գնահատող հանձնաժողովը) սահմանված պահանջներին համապատասխան՝ «27. Եթե գնահատող հանձնաժողովը չի ապահովում Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարումը, ապա քարտուղարը դրա մասին հայտնի դառնալու օրը գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին, որը՝

1) զեկուցագիրը ստանալու օրը՝

ա. հրամանով կասեցնում է հանձնաժողովի գործունեությունը: Եթե կասեցման հրամանով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա հանձնաժողովի գործունեությունը կասեցվում է մինչև երեք աշխատանքային օրով,

բ. հանձնարարում է պատվիրատուի իրավաբանական ծառայությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը տալ իրավական եզրակացություն: Իրավաբանական ծառայությունը կարող է եզրակացություն տալու համար պահանջել և ստանալ լրացուցիչ նյութեր.

2) իրավաբանական ծառայության գրավոր առաջարկի հիման վրա հարցի վերաբերյալ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով կարող է դիմել իրավասու (մասնագիտացված) մարմինների: Նման դեպքում հանձնաժողովի գործունեության կասեցման ժամկետը երկարացվում է մինչև եզրակացություն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ինչի կապակցությամբ պատվիրատուի ղեկավարի կողմից ընդունվում է հրաման.

3) իրավական եզրակացությունն ստանալուց հետո հրամանով՝

ա. հանձնաժողովի գործունեությունը վերականգնվում է, եթե իրավական եզրակացությամբ զեկուցագիրը համարվել է անհիմն, կամ

բ. հանձնարարվում է գնահատող հանձնաժողովին, ըստ իրավական եզրակացության, վերանայել հանձնաժողովի որոշումները: Զեկուցագիրը և իրավական եզրակացությունը կցվում են արձանագրությանը:»:

Ելնելով վերոնշյալից, Սոցիալական ապահովության ծառայությունը գտել է, որ հանձնաժողովի կողմից կայացված որոշումն իրավաչափ է, բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/12 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

2019 թվականի մարտի 7-ին Սոցիալական ապահովության ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից հայտարարվել է Ծառայության կարիքների համար ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգ՝ ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով:

Գնման ընթացակարգի շրջանակում, բացի այլ ընկերությունների, հայտեր են ներկայացրել այդ թվում «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ-ն ու «ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովի 2019թ. մարտի 15-ի որոշմամբ 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊԸ-ն, որին հրավերով սահմանված պահանջներին համապատասխան առաջարկվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

«ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովին է ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, որոնց գնահատման արդյունքում

հանձնաժողովի կողմից արձանագրվել է հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես.

- մասնակցի կողմից ներկայացված որպես նախկինում կատարված նմանատիպ N ՀՀ ԳՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ17/1 պայմանագրի շրջանակներում ընկերությունը մատուցել է ՀՀ ԳՆ աշխատակազմի ՍԱՊԾ էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի գործարկման նպատակով անհրաժեշտ նոր մոդուլների ստեղծման և ուսուցման, նախկին մոդուլների լրամշակման և ուսուցման, ուսուցողական ձեռնարկների ստեղծման, անհրաժեշտ ծրագրավորման աշխատանքների կատարման և հետագա սպասարկման ծառայություններ:

«ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊԸ-ի կողմից N ՀՀ ԳՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ17/1 պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունը՝ արդյունքը չի գնահատվում որպես «նմանատիպ», քանի որ պայմանագրով ներկայացված համակարգը.

1. հանդիսանում է տարաբնույթ տեղեկատվության մուտքագրման, հաշվառման ռեեստր, տեղեկատվության փոխանակման համակարգ և առցանց գրանցման պորտալ, համապատասխան հաշվետվություններով և վերահսկողական գործառույթներով,

2. չի ապահովել ինքնաշխատ եղականով այնպիսի որոշումների կայացումը, որոնք քաղաքացու համար առաջացնում են իրավունքներ և պարտականություններ,

3. որպես կարևոր բաղադրիչ չունի միանվագ և պարբերական վճարումների իրականացումն ապահովող գործառույթ:

ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնանշման հրավերի գնման առարկան՝ «Էլ.կենսաթոշակ» համակարգը իր ենթահամակարգերով իրականացնում է ՀՀ քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և այլ անձանց իրավունքների ապահովումը «Կենսաթոշակների մասին», «Նպաստների մասին» ՀՀ օրենքների շրջանակում, որի վերջնական արդյունքը շահառուների հասանելիք գումարների վճարումն է, ինչն իրականացնելու համար համակարգը կայացնում է մի շարք ավտոմատացված որոշումներ.

1) մուտքագրված տարաբնույթ տեղեկատվության հիման վրա էլեկտրոնային գործի ձևավորման, համապատասխան վճարատեսակի (վճարատեսակների), չափի, վճարման ենթակա գումարի, ժամկետների ինքնաշխատ որոշում,

2) առկա տեղեկատվության հիման վրա կենսաթոշակ (նպաստ) վճարելու դադարեցման և կենսաթոշակ (նպաստ) ստանալու իրավունքի դադարեցման ինքնաշխատ որոշումներ,

3) համակարգում առկա տվյալների հիման վրա միանվագ և պարբերական վճարման ցուցակների ձևավորում,

4) վճարումների վերաբերյալ տեղեկատվության ամփոփումից հետո հաջորդ ամսվա վճարման ենթակա տվյալների ինքնաշխատ նախապատրաստում (այն է՝ նախորդ ամսում

չվճարված գումարների ձևավորում որպես անցողիկ գումար, ինչպես նաև 12-րդ ամիսը չվճարված գործերի վճարման դադարեցում):

Հիմք ընդունելով վերոգրյալը հանձնաժողովի որոշմամբ կասեցվել է նիստը մեկ աշխատանքային օրով և «ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊԸ-ին՝ առաջարկվել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

2019թ. մարտի 28-ի նիստին «ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊ ընկերությունը՝ նախկինում կատարված նմանատիպ պայմանագրում տեղ գտած հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխունությունը շտկելու վերաբերյալ ծանուցմանը ի պատասխան, հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովին է ներկայացրել գրություն, որով 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը ևս մեկ անգամ հավաստում է, որ արդեն ներկայացված նախկինում կատարված նմանատիպ N ՀՀ ԳՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ17/1 պայմանագրի շրջանակներում ընկերության կողմից մատուցված ծառայությունները համապատասխանում են հրավերով դրանց գնահատման համար սահմանված պահանջներին: Նույն նիստի ընթացքում հանձնաժողովի որոշմամբ.

1) «ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար:

2) մերժվել է «ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊ ընկերության հայտը հետևյալ հիմնավորմամբ՝ կազմակերպության կողմից հանձնաժողովին ներկայացրած՝ նախկինում կատարված նմանատիպ N ՀՀ ԳՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ17/1 պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայության (պայմանագրի) առարկան՝ սպասարկված համակարգը, չի գնահատվում որպես «նմանատիպ», քանի որ պայմանագրով ներկայացված համակարգը.

ա) հանդիսանում է տարաբնույթ տեղեկատվության մուտքագրման, հաշվառման ռեեստր, տեղեկատվության փոխանակման համակարգ և առցանց գրանցման պորտալ, համապատասխան հաշվետվություններով և վերահսկողական գործառույթներով,

բ) մուտքագրված տվյալների հիման վրա չի ապահովում ավտոմատացված այնպիսի որոշումների կայացումը, որոնք քաղաքացու համար առաջացնում են իրավունքներ և պարտականություններ (Ծառայության գործառույթների շրջանակում քաղաքացիների կենսաթոշակի, նպաստի, պարգևավճարի, պատվովճարի և սոց. ապահովության ծրագրերով նախատեսված այլ դրամական վճարների նշանակման և վճարման իրավունքի ձևակերպման, փոփոխման և դադարեցման հետ կապված գործառույթները իրականացվում են ավտոմատացված կերպով՝ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի առանձնացված ենթահամակարգերի միջոցով: Այսինքն, համակարգն ինք է ապահովում որոշումների ինքնաշխատ կայացումը, այդ թվում՝ նշված դրամական վճարների բոլոր տեսակների, վճարման ապահովումը (վճարման ցուցակների ձևավորումը և վճարման գործընթացի հետ կապված այլ գործառույթներ):

գ) որպես կարևոր բաղադրիչ չունի միանվագ և պարբերական վճարումների իրականացումն ապահովող գործառույթ:

Հիմք ընդունելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովի որոշմամբ ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով հրավերի 7.21 կետով սահմանված կարգով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊ ընկերությանը:

Հանձնաժողովի քարտուղարի 2019թ. մարտի 29-ի զեկուցագրի հիման վրա կասեցվել է հանձնաժողովի գործունեությունը, Ծառայության իրավական ապահովման և դատական գործերի վարչության եզրակացություն ստանալու համար՝ «ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊ ընկերության հայտը գնահատող հանձնաժողովի կողմից վերը նշված հիմքով մերժելու և «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով հրավերով սահմանված պահանջներին և Կարգի 65-րդ կետով համանման (նմանատիպ) գործարքների համար սահմանված պահանջներին չբավարարելու հիմնավորմաբ:

Իրավական եզրակացությունն ստանալուց հետո հանձնարարվել է գնահատող հանձնաժողովին, ըստ իրավական եզրակացության, վերանայել հանձնաժողովի որոշումները: 2019թ. ապրիլի 5-ի հանձնաժողովի որոշմամբ վերանայվել է «ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊ ընկերությանը մերժելու որոշումը և Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից և հրավերով սահմանված անգործության ժամկետից հետո պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ …բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների ընթացակարգի կազմակերպան» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 27-րդ կետի համաձայն՝ եթե գնահատող հանձնաժողովը չի ապահովում Գնումների մասին Հայաստանի

Հանրապետության օրենսդրության պահանջների կատարումը, ապա քարտուղարը դրա մասին հայտնի դառնալու օրը գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին, որը՝

1) զեկուցագիրը ստանալու օրը՝

ա. հրամանով կասեցնում է հանձնաժողովի գործունեությունը: Եթե կասեցման հրամանով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա հանձնաժողովի գործունեությունը կասեցվում է մինչև երեք աշխատանքային օրով,

բ. հանձնարարում է պատվիրատուի իրավաբանական ծառայությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը տալ իրավական եզրակացություն: Իրավաբանական ծառայությունը կարող է եզրակացություն տալու համար պահանջել և ստանալ լրացուցիչ նյութեր.

2) իրավաբանական ծառայության գրավոր առաջարկի հիման վրա հարցի վերաբերյալ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով կարող է դիմել իրավասու (մասնագիտացված) մարմինների: Նման դեպքում հանձնաժողովի գործունեության կասեցման ժամկետը երկարացվում է մինչև եզրակացություն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ինչի կապակցությամբ պատվիրատուի ղեկավարի կողմից ընդունվում է հրաման.

3) իրավական եզրակացությունն ստանալուց հետո հրամանով՝

ա. հանձնաժողովի գործունեությունը վերականգնվում է, եթե իրավական եզրակացությամբ զեկուցագիրը համարվել է անհիմն, կամ

բ. հանձնարարվում է գնահատող հանձնաժողովին, ըստ իրավական եզրակացության, վերանայել հանձնաժողովի որոշումները: Զեկուցագիրը և իրավական եզրակացությունը կցվում են արձանագրությանը:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն է որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ

միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Սույն գործով Ընկերությունը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք:

Ընկերությունը, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել վերաբերելի ապացույց առ այն, որ «ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊ ընկերության կողմից հանձնաժողովին ներկայացված թիվ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/7 և ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/8, 06/12 և 08/12/2017 թվականի պետական գնման պայմանագրերով չի հիմնավորվում համանման/նմանատիպ ծառայությունների մատուցված լինելու փորձի փաստը: Այն, որ նշված պայմանագրերի թիվ 1 հավելվածներով սահմանված տեխնիկական բնութագրերում բացակայում է ավտոմատացված որոշումներ կայացնող համակարգի մշակման/ներդրման և(կամ) սպասարկման ծառայությունների մասին նշում:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ թեև Ընկերությունը, որպես փաստական հիմք, իր բողոքում նշել է «ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊ ընկերության կողմից հանձնաժողովին ներկայացված թիվ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/7 և ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/8, 06/12 և 08/12/2017 թվականի պետական գնման պայմանագրերի մասին, որպես համանման/նմանատիպ ծառայությունների մատուցված լինելու փորձի փաստի բացակայությունը հավաստող հանգամանք, սակայն չի ներկայացրել նշված պայմանագրերը՝ որպես իր վկայակոչած փաստի ապացույց:

Ընդ որում, այդպիսի հնարավորություն Ընկերությունը ունեցել է, թե բողոքը ներկայացնելու պահին, և թե բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Ինչ վերաբերվում է Ընկերության հանձնաժողովի քարտուղարի և ՍԱԾ գլխավոր քարտուղարի՝ ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում, իրենց իրավասության շրջանակում կայացրած որոշումների վերաբերյալ մեկնաբանություններին, ապա Բողոք քննող անձը գտնում է, որ հանձնաժողովի քարտուղարի և ՍԱԾ գլխավոր քարտուղարի գործողությունները բխել է ՀՀ գնումների օրենսդրությունից, գործել են իրավաչափ՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի VI բաժնի դրույթներին, սահմանված պահանջներին համապատասխան:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է ամբողջությամբ մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ-ի կողմից 17.04.2019թ.-ին ներկայացրած բողոքն ամբողջությամբ մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ